ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռուս-թուրքական մրցակցություն, թե՞ համագործակցություն

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան
ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում քննարկվում են հատկապես ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո կտրուկ վայրիվերումներով աչքի ընկնող ռուս-թուրքական հարաբերությունները: Դրանց տնտեսական բաղադրիչի տպավորիչ աճը և էլ ավելի ընդլայնվելու հեռանկարները երաշխիք չեն դառնում անգամ տեսանելի ապագայում հարաբերությունների կանխատեսելիության ապահովման համար: Վերջին տասնամյակում նոր աշխարհակարգի ձևավորմամբ պայմանավորված Եվրասիական կենտրոնում ծավալվող բուռն զարգացումներով է մեծապես պայմանավորված այդ հարաբերությունների տուրբուլենտային բնույթը: Այդ երկրների հարաբերություններում զգալի ազդեցություն ունի այն հանգամանքը, որ նրանց շահերը համընկնում է դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման նպատակով իրագործվող որոշ ծրագրերում: Հարաբերությունների բարդությունն ու բազմագործոնությունը հաճախ պատճառ է դառնում համագործակցության կտրուկ վերափոխմանը մրցակցության, իսկ երբեմն էլ՝ կոշտ հակադրության:

Բանալի բառեր
Թուրքիա, Ռուսաստան, կասպյան ավազան, էներգակիրներ, մրցակցություն, համագործակցություն

Նախաբան

Միջազգային երկկողմ հարաբերություններում Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերություններն առանձնանում են կտրուկ վայրիվերումներով, համագործակցության և մրցակցության ամենաարտասովոր համադրումներով ու հերթագայությամբ: Դա պայմանավորված է երկու կողմերի խիստ յուրահատուկ արտաքին քաղաքականությամբ և նրանց շահերի բախմամբ այնպիսի բարդ տարածաշրջաններում, ինչպիսիք են Եվրասիական կենտրոնի[1] (Eurasian Heartland) երկու

[1] **Mackinder H.,** The Geographical Pivot of History, *The Geographical Journal,* 1904, 23; **Mackinder H.**, Democratic Ideals and Reality, London: Constable and Company, 1919.

առավել ակտիվ հատվածները՝ Հարավային Կովկասն ու Մերձավոր Արևելքը: Երեքհարյուրամյա պատմություն ունեցող նման հարաբերությունների առանձնահատկությունները հատկապես ընդգծված դրսևորում են ստանում աշխարհաքաղաքական վերադասավորումների շրջանում: Դրանցից վերջինը սկսվեց ԽՍՀՄ փլուզումից հետո: 90-ականների սկզբին, երբ Ռուսաստանը բախվել էր հետխորհրդային ներքաղաքական տրանսֆորմացիայի գործընթացով պայմանավորված բազմաթիվ մարտահրավերների, պաշտոնական Անկարան համարեց, որ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ձևավորվել է բարենպաստ իրավիճակ՝ ԽՍՀՄ փլուզումով առաջացած արտաքին ազդեցության վակուումը լրացնելու և այդ տարածաշրջաններն իր գերակա ազդեցության գոտիների վերածելու համար:[2] Սակայն շատ արագ Թուրքիան համոզվեց, որ տարբեր պատճառներով այդ նպատակի իրագործումն անիրատեսական է և փորձեց տարածաշրջանում նոր որակի դերակատարություն ապահովել այլ ճանապարհով: 1990-ականների սկզբին մեծ էր Արևմուտքի հետաքրքրությունն ադրբեջանական և, ընդհանրապես, կասպյան ավազանի էներգակիրների նկատմամբ: Պաշտոնական Անկարան կարողացավ խոչընդոտել դրանց տեղափոխմանը Ռուսաստանի տարածքով՝ սահմանելով իր նեղուցներով էներգակիրների տեղափոխման նոր պահանջներ: Միաժամանակ, Միացյալ Նահանգների ու եվրոպական երկրների համար ակնհայտորեն նախընտրելի էր Ռուսաստանը շրջանցող երթուղին: Արդյունքում ստացվեց, որ առկա իրավիճակում այդ տարածաշրջանի էներգակիրների տեղափոխման համար խողովակաշարերի կառուցման միակ հնարավոր երթուղին պետք է անցներ Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի տարածքներով: 1990-ականների կեսերին կնքված պայմանագրերի հիման վրա կառուցվեց և 2005թ. շահագործման հանձնվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը, իսկ 2006թ.՝ Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղը: Թվում էր, թե իրական հնարավորություններ են ստեղծվում իրագործելու 1998թ. Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի և Ուզբե-

[2]**Torosyan T.,** The Return of Turkey, *Russia in Global Affairs,* 2009, 3, July-September, 120-129.

կստանի ստորագրած հռչակագրի նպատակները՝ կասպյան ավազանի և միջինասիական նավթը Բաքու-Ջեյհան նավթամուղով համաշխարհային շուկաներ հասցնելու վերաբերյալ: Անկարան հույս ուներ, որ այդ ծրագրին Միացյալ Նահանգների և Եվրամիության երկրների անվերապահ աջակցությունը ոչ միայն ապահովելու է դրա հաջողությունն, այլև էական գործոն կդառնա Եվրասիական կենտրոնում Թուրքիայի դերակատարության որակական աճի համար: Առավել ևս, որ Թուրքիան այդ նպատակով փորձում էր օգտագործել ոչ միայն բարդ տարածաշրջանում տեսանելի ապագայի համար դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման միակ տրանզիտային երկիր լինելու հանգամանքն, այլև իր զգալի ազդեցությունն այդ ծրագրով էներգակիրների «դոնոր» երկրներից մեկի՝ Ադրբեջանի վրա: Սակայն զարգացումներն այլ ընթացք ունեցան: 2000-ականների սկզբից Եվրասիական կենտրոնի երկու հատվածներում՝ Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում, լարվածությունը սկսեց շարունակաբար խորանալ՝ պայմանավորված մի քանի հանգամանքներով: Ռուսաստանին հաջողվել էր հաղթահարել ներքաղաքական լարվածությունները, կոնսոլիդացնել իշխանությունն ու ավելի ու ավելի վճռականորեն էր դրսևորում իր արտաքին քաղաքական դերակատարության էական մեծացման ձգտումները: Միացյալ Նահանգները չէր հրաժարվում միաբևեռ աշխարհակարգի հաստատման նպատակներից, Եվրամիությունն էլ փորձում էր հնարավորություններ գտնել էներգակիրների ներմուծման ծավալների մեծացման ու դրանց տեղափոխման երթուղիների և աղբյուրների բազմազանեցման համար: Արդյունքում, կասպյան ավազանի և միջինասիական էներգակիրների տեղափոխման խնդիրը մի կողմից դառնում էր աշխարհաքաղաքական մրցակցության գործիք, մյուս կողմից՝ աշխարհաքաղաքական շահերի բախման պատանդ: Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները կրում են այդ լարվածությունների ակներև ազդեցությունը և դրանցում մրցակցություն-համագործակցություն բաղադրիչների տարաշխարհիկ համադրումները առավել ցայտուն են արտահայտում գործընթացների զարգացումները: Իրավիճակն էլ ավելի բարդացրեց Մերձավոր Արևելքում լարվածության նոր օջախի (Սիրիա) ձևավորումը, որն իր ծավալներով, արտաքին դերակատարների ներգրավվածությամբ (այդ

թվում՝ ԱՄՆ, Ռուսաստան և Թուրքիա) ու հնարավոր անկանխատեսելի հետևանքներով ստվերեց տարածաշրջանի մյուս խնդիրները: Հոդվածի խնդրո առարկայի տեսակետից պետք է դիտարկել ոչ միայն տարածաշրջանային մեծ ընդգրկումը, ազդեցիկ գործոնի՝ դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման խնդիրները, գործընթացներում ազդեցիկ դերակատարների ներգրավվածությունն ու նրանց շահերի լուրջ բախումներն, այլև նրանց վարած քաղաքականության առանձնահատկությունները:

Հարավային Կովկասում նոր աշխարհաքաղաքական իրավիճակի ձևավորման նախադրյալները

Կասպից ծովի օգտագործման հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ ափամերձ երկրների միջև համաձայնության բացակայության, ինչպես նաև 2000-ականների սկզբից դրսևորվող Ռուսաստանի աշխարհաքաղաքական նկրտումներից բխող կանխարգելիչ քայլերի հետևանքով ԲԹՋ-ով և ԲԹԷ-ով սկսված կասպյան էներգակիրների տեղափոխման ծրագիրը հետագա ընթացք չունեցավ՝ տարածաշրջանում միանգամայն նոր զարգացումների հետևանքով: ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի ընդլայնումից հետո Սև ծովը դարձավ Եվրոպայի արևելյան սահմանագիծ, ինչի արդյունքում նրա նշանակությունը ՆԱՏՕ-ի համար ավելի մեծացավ: Ավելին, չնայած Ռուսաստանի կոշտ արձագանքներին, Ուկրաինան և Վրաստանը շարունակում էին պնդել, որ իրենց արտաքին քաղաքական գլխավոր նպատակն է ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցությունը: Մի կողմից, Ռուսաստանը փորձում էր պահպանել իր ազդեցությունը Սևծովյան տարածաշրջանի նկատմամբ, իսկ մյուս կողմից, ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն ձգտում էին մեծացնել իրենց ազդեցությունն այդ անհանգիստ, սակայն մեծ ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում[3]: Բաժանարար բուֆերների վերանալը բախումները դարձնում էին անխուսափելի: Մոսկվայի դիրքորոշումը 2007թ. հստակ ձևակերպումներ ստացավ Մյունխենի անվտանգության հարցերին նվիրված ամենամյա կոնֆերանսի ժամանակ՝ Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի ելույթում[4]: Նա

[3] **Öniş Z. and Yılmaz Ş.,** Turkey and Russia in a shifting global order: cooperation, conflict and asymmetric interdependence in a turbulent region,- *Third World Quarterly*, 2015, **37**, 1, p. 13.

[4] Vladimir Putin, 'Speech at the 43rd Munich Conference on Security Policy', 10 Feb. 2007, available at http:globalsecurity.org/…/2007/putin-munich_070210.htm

հայտարարեց, որ Մոսկվայի համար ընդունելի չեն միաբևեռ աշխարհակարգի ձևավորման քայլերը, մասնավորապես, միջազգային հարաբերություններում ԱՄՆ նոր որակի դերակատարության փորձերը: Այդ ելույթը խորհրդանշական նշանակություն ստացավ նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի շրջանակներում ռուս-ամերիկյան մրցակցության նոր փուլի մեկնարկի տեսակետից, որը հետագայում հանգեցրեց կոշտ դիմակայությունների, պատժամիջոցների, իսկ երբեմն էլ՝ անուղղակի բախումների:[5] Բնականաբար, այդ ամենը լուրջ ազդեցություն ունեցավ ոչ միայն Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում գերիշխանության ձգտող այդ երկրների երկկողմ հարաբերությունների, այլև այդ տարածաշրջաններում իրադարձությունների հետագա զարգացումների վրա: Այդ ազդեցությունը հատկապես նկատելի է ռուս-թուրքական հարաբերություններում, քանի որ Անկարան իր նպատակների իրագործման համար փորձում է մի կողմից օգտագործել տասնամյակների դաշնակցային հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ, մյուս կողմից՝ համագործակցության հնարավորությունները Ռուսաստանի հետ: Անկարայի ձգտումը բանաձևել է Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը. «Ամերիկան մեր դաշնակիցն է, իսկ ՌԴ-ն՝ կարևոր հարևան: ՌԴ-ն մեր թիվ մեկ առևտրային գործընկերն է: Մեր էներգիայի 2/3 մենք ստանում ենք ՌԴ-ից: Մենք գործում ենք մեր ազգային շահերին համահունչ: Մենք չենք կարող անտեսել ՌԴ-ին»[6]: Իհարկե, Ռուսաստանն անցյալում էլ առիթներ ունեցել է համոզվելու, որ Թուրքիան նախընտրում է մարտավարական քայլերը՝ կոնկրետ իրավիճակներից առավելագույն օգուտ ստանալու մտադրությամբ: Միգուցե Մոսկվան դա շահերի համադրման հնարավորություն է դիտարկում՝ ռազմավարական արդյունքների ակնկալիքով մարտավարական շահերի զգալի բաժին զիջելով Անկարային: Առավել ևս, որ ուկրաինական ճգնաժամի հետևանքով սկիզբ առած Արևմուտքի պատժամիջոցների պայմաններում Մոսկվան միջազգային համագործակցության ոլորտում մեծ ընտրություն չունի: Ռուսաստանի գործընկեր պետությունների խիստ սահմանափակ շրջանակում Թուրքիան ունի կարևոր տեղ: Դժվար չէ նկատել, որ նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլում ռուս-թուրքական հարաբերություններում կողմերը ոչ միայն դատապարտ-

---

[5] **Torosyan T., Vardanyan A.,** The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, **20**, 3, 559-582.

[6] **Aras B.,** Davutoglu Era in Turkish Foreign Policy, *Insight Turkey,* 2009, **11**, 3, p. 137.

ված են նուրբ խուսանավումների՝ համագործակցության ու կոշտ մրցակցության միջև, այլև երբեմն դիմելու աննախադեպ քայլերի:

Աշխարհաքաղաքական նոր իրավիճակ Հարավային Կովկասում

Ռուս-վրացական պատերազմի ավարտից անմիջապես հետո պաշտոնական Անկարան թույլ չտվեց ԱՄՆ ռազմանավերին թուրքական նեղուցներով մուտք գործել Սև ծով[7]: Պաշտոնական բացատրությունը խիստ դիվանագիտական էր. ԱՄՆ-ը փորձում է վերանայել Մոնթրեյի կոնվենցիայի դրույթները, ինչը անընդունելի է թուրքական կողմի համար: Սակայն ակնհայտ էր, որ խնդիրը Թուրքիայի «անվերապահ հավատարմությունը» չէր Մոնթրեյի կոնվենցիային, այլ աննախադեպ հակադրվելն իր գլխավոր դաշնակցին՝ ի նպաստ այդ իրավիճակում վերջինիս գլխավոր մրցակցի: Թեև որոշ թուրք մասնագետներ փորձում էին այդ քայլը ներկայացնել որպես խուսափում Ռուսաստանի հետ վտանգավոր դիմակայությունից[8], սակայն ակնհայտ էր, որ իրականում այն բարենպաստ քայլ էր ռուսական կողմի նկատմամբ[9]: Պատահական չէ, որ այդ քայլը խիստ քննադատության արժանացավ Արևմուտքում՝ Թուրքիային մեղադրելով ՆԱՏՕ-ի շահերը դավաճանելու և ՌԴ-ին աջակցելու մեջ[10]: Սակայն մի քանի օր անց Անկարան նման երկրորդ քայլն արեց: 2008թ. օգոստոսի 12-ին Մոսկվա այցելեց Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը՝ առաջարկելով ստեղծել «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»՝ հարավկովկասյան երեք ճանաչված պետությունների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան), ինչպես նաև ՌԴ-ի և Թուրքիայի մասնակցությամբ[11]: Ակնհայտ

---

[7] **Aras B.,** Turkey and the Russian Federation: An Emerging Multidimensional Partnership, *SETA Policy Brief,* No.35, 2009, p. 8; **Morrison D.,** Turkey restricts US access to the Black Sea, 18.10.2008, www.david-morrison.co.uk.

[8] **Özel S., and Şuhnaz Y.,**Turkish–American Relations for a New Era: A Turkish Perspective, *TÜSİAD Report*, İstanbul, April 2009, p. 73.

[9] **Öniş Z. and Yılmaz Ş.,** Op. cit., 13:

[10] **Baran Z.**, Will Turkey Abandon NATO? *The Wall Street Journal.* 2008. August 29, http://online.wsj.com/article/SB121997087258381935.html?mod=googlenews_wsj.

[11] **Devrim D.** and **Schulz E.,** The Caucasus: Which Role for Turkey in the European Neighborhood?,- *Insight Turkey*, 2009, **11**, 3, 177-193; **Çelikpala M.,** Türkiye ve Kafkasya: Reaksiyoner Dış Politikadan Proaktif Ritmik Diplomasiye Geçiş, *Uluslararası İlişkiler*, Cilt 7, Sayı 25, s. 93-126.

էր, որ նման բան՝ այդ ձևաչափով, տեսանելի ապագայում հնարավոր չէր առնվազն Ռուսաստան-Վրաստան, Ադրբեջան-Հայաստան երկկողմ հարաբերությունների պայմաններում: Դժվար է իրատեսական համարել, որ Անկարայում դա չեն գիտակցել: Կարճ ժամանակ անց մարած նախաձեռնության իմաստը բոլորովին այլ էր: Էրդողանը ոչ միայն հրապարակավ հայտարարեց նման նախաձեռնությամբ հանդես գալու մասին՝ առանց իր դաշնակցի՝ Միացյալ Նահանգների, հետ հարցը նախապես քննարկելու, այլև առաջարկվող պլատֆորմի ձևաչափում չէր տեսնում պաշտոնական Վաշինգտոնին: Պլատֆորմի իրագործման հեռանկարների իսպառ բացակայության դեպքում անգամ Թուրքիայի քայլը զգալի աջակցություն էր Ռուսաստանին, որը պատվախնդիր աշխարհաքաղաքական նկրտումների և ռուս-վրացական պատերազմի պատճառով դարձել էր Արևմուտքի խիստ քննադատության թիրախ: Պատահական չէ, որ դրանից հետո Մոսկվայի ու Անկարայի հարաբերությունները կտրուկ բարելավվեցին: Ընդ որում, ոչ միայն բարձր մակարդակով հանդիպումների հաճախականության էական մեծացմամբ[12], առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ չորս տասնյակից ավելի պայմանագրերի կնքմամբ[13] և երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը 2020թ. 100 միլիարդ դոլարի հասցնելու նպատակադրումով[14], այլև էներգետիկայի ոլորտում համագործակցության նոր որակի ապահովմամբ: Ընդ որում, դա դրսևորվում էր ոչ միայն բազմամիլիարդանոց ծրագրերի ֆինանսավորմամբ, այլև ռազմավարական նշանակությամբ: Մասնավորապես, հիշատակման արժանի են հատկապես Թուրքիայում առաջին ատոմակայանի, Սամսուն-Ջեյհան նավթամուղի և

---

[12] **Özbay F.,** The Relations between Turkey and Russia in the 2000s, *Perceptions: Journal of International Affairs,* 2011, **XVI,** Autumn, 3, p. 77 ; **Kolobov O., Kornilov A.,** Middle East Policy of Russia Under President Medvedev: Strategies, Institutes, Faces, *Bilge Strateji*, Cilt 2, Sayı 4, Bahar 2011, s. 30 ; **Weitz R.,** Russia-Turkey Energy Ties: Cooperation with Conflict, *DIPLOMAATIA*, No. 109, September 2012, http://www.diplomaatia.ee/en/article/russia-turkey-energy-ties-cooperation-with-conflict/.

[13] Ibid.

[14] Турецкий премьер: товарооборот с Россией вырастет до 100 млрд долларов к концу десятилетия, 22.11.2013, http://fedpress.ru/news/polit_vlast/news_polit/1385117429-turetskii-premer-tovarooborot-s-rossiei-vyrastet-do-100-mlrd-dollarov-k-kontsu-desyatilet

առանցքային նշանակություն ունեցող «Հարավային հոսք» գազամուղի կառուցման նախագծերի[15] համատեղ իրագործման վերաբերյալ պայմանավորվածությունները: Այդուհանդերձ, ռուս-թուրքական հարաբերությունները չեն գնահատվում որպես «ռազմավարական գործընկերություն», թեև համարվում է, որ էներգետիկայի ոլորտում դրանք գտնվում են «ռազմավարական հարթությունում»:[16] Սակայն դա չի նշանակում, թե այդ ոլորտում երկու երկրների միջև խնդիրներ չէին առաջանում: Առավել ևս, որ երկու երկրների նպատակներն այդ ոլորտում նաև հակասություններ ունեն: Ռուսաստանի նպատակը Թուրքիայի հետ հարաբերություններում վերջինիս կախվածության մեծացումն է ռուսական գազից, դրանով կանխելով Կենտրոնական Ասիայից և Կասպիցի ավազանից այնպիսի խողովակաշարերի անցկացումը, որոնք Մոսկվան չի վերահսկում: Մինչդեռ Անկարան ձգտում է դիվերսիֆիկացնել էներգետիկ պաշարների իր աղբյուրները և դառնալ այդ տարածաշրջաններից դեպի Եվրոպա ածխաջրածինների տեղափոխ- ման խոշորագույն հանգույց: Այդ պատճառով Թուրքիան փորձում է առավելագույն շահավետորեն օգտագործել Ռուսաստանի և Եվրամիության մրցակցությունը: Վերջինս ակտիվորեն աջակցում էր Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նավթի ու գազի էներգետիկ ռեսուրսները դեպի Եվրոպա տեղափոխող և Ռուսաստանը շրջանցող խողովակաշարերի կառուցման նախագծերի, առաջին հերթին՝ «Նաբուկո» գազատարի կառուցման գաղափարին[17]: Թուրքիան այստեղ էլ ցանկանում էր կարևոր դերակատարություն ունենալ և

---

[15] **Raufoglu A.,** Turkey, Russia at Odds over Middle East, Caucasus, *Foreign Policy,* 3.06.2012, http://www.foreignpolicyjournal.com/2012/06/03/turkey-russia-at-odds-over-middle-east-caucasus/., Հայաստանի խորհրդարանի նախկին նախագահ. Ռուսաստանի ու Թուրքիայի շահերը համընկնում են, 07.08.2009, http://news.am/arm/news/2161.html.

[16] **Özbay F.,** Türkiye-Rusya İlişkileri: Stratejik Ortaklık Mı?, *Hasret Çomak (ed.), 21. Yüzyılda Çağdaş Türk Dış Politikası ve Diplomasisi, Kocaeli, Umuttepe Yayınları,* 2011, pp. 301-312.

[17] **Roberts J. M.,** The Black Sea and European energy security, *Southeast European and Black Sea Studies,* 2006, **6**, 2, 207-223; **Kardas S.,** Nabucco Intergovernmental Agreement Signed in Ankara, *Eurasia Daily Monitor,* **6**, 134, 14.07.2009, http://www.jamestown.org/single/?tx_ttnews%5Btt_news%5D=35262&no_cache=1#.V1FFtjV97cs). **Freifeld D.,** The great pipeline opera, *Foreign Policy,* 22. 08.2009, http://foreignpolicy.com/2009/08/22/the-great-pipeline-opera/.

պատահական չէ, որ այդ գազատարի կառուցման միջկառավարական համաձայնագիրը ստորագրվեց Անկարայում 2009թ. հուլիսի 13-ին, երբ արդեն Մոսկվայի հետ հարաբերությունների բարելավման շրջանակում քննարկվում էր «Նաբուկո»-ի այլընտրանք ռուսական «Հարավային հոսք» նախագծին Թուրքիայի միանալու հարցը: Թեև Ռուսաստանի արձագանքը համաձայնագրի ստորագրմանը կտրուկ էր՝ ՌԴ էներգետիկայի նախարար Ս. Շմատկոն նախազգուշացրեց չպլանավորել տարածաշրջանի էներգետիկ ապագան առանց Ռուսաստանի՝ հիշեցնելով Ռուսաստանում տարածված հայտնի արտահայտություններից մեկը. «Արջին դեռ չսպանած, մորթին մի՛ վաճառիր»[18], սակայն ռուս-թուրքական հարաբերությունների ընթացքի վրա այն ազդեցություն չունեցավ:

Տարածաշրջանում (Վրաստանում) Միացյալ Նահանգների ներկայության աննախադեպ և անշրջելի ամրապնդումով, ԵՄ կտրուկ ակտիվացումով և ռուս-թուրքական հերթական մերձեցումով, ինչպես նաև սիրիական հակամարտության խորացմամբ իրավիճակը Եվրասիական կենտրոնում ստացավ նոր որակ և կտրուկ փոխվեցին հետագա զարգացումների հեռանկարները: Այդ տարավեկտոր գործընթացներից առավելագույն շահ ստանալու նպատակով Թուրքիան պետք է օգտագործեր զգույշ, բայց նաև էական խուսանավումները՝ ճոճանակային մերձեցումներով ու ոչ անվերադարձ հեռացումներով բոլորի հետ (ԱՄՆ, ԵՄ, Ռուսաստան) պահպանելով տվյալ պահին իր համար առավել արդյունավետ հեռավորություն: Այդ առումով սպասելի էր, որ Արևմուտքի համար կարևոր իրավիճակներից որևէ մեկում Թուրքիան կրկին ցույց կտա Ռուսաստանին և մյուսներին, որ ցանկացած նոր իրավիճակ նոր գործարք է պահանջում: Դա տեղի ունեցավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Սիրիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու բանաձևի քննարկման ժամանակ, երբ Թուրքիան միացավ Արևմուտքին և Արաբական երկրների լիգային՝ հակադրվելով Ռուսաստանի դիրքորոշմանը[19]: Սակայն, Մ. Այյուբի կարծիքով, դա չէր նշանակում, որ Թուրքիան վերադառնալու է իր ավանդական

[18] **Freifeld D.,** Op. cit.

[19] **Арбатова Н.,** Москва и Анкара в многополярном мире, *Военно-промышленный курьер,* № 26 (443), 04.07.2012, http://vpk-news.ru/articles/9018.

ռազմավարական կախվածությանը ԱՄՆ-ից և նրա դաշնակիցներից, ինչը Անկարայի արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասն էր «Սառը պատերազմի» ժամանակ և հետխորհրդային առաջին տասնամյակում: Ըստ նրա, Էրդողանի «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության օրոք Թուրքիան ձգտում էր ռազմավարական ինքնուրույնության, ինչպես նաև աննախադեպ ակտիվության Մերձավոր Արևելքում՝ հստակ ընկալելով, որ նման քաղաքականությունը, միևնույն ժամանակ, չպետք է լրջորեն խաթարի ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունները[20]:

Էներգակիրների տեղափոխման երթուղիների ազդեցությունը նոր աշխարհաքաղաքական իրավիճակի ձևավորման վրա

Թեև ռուս-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունները զարգանում էին գրեթե բոլոր ուղղություններով՝ շինարարություն (1989-2014թթ. թուրքական շինարարական կազմակերպությունների իրականացրած նախագծերի ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 61.7 մլրդ. դոլար[21]), բանկային գործ (2012թ. սեպտեմբերին ռուսական «Սբերբանկ»-ը 3.5 միլիարդ դոլարով ձեռք բերեց թուրքական «Դենիզ» բանկի բաժնետոմսերի 99.85 տոկոսը[22]), զբոսաշրջություն (2014թ. Թուրքիա էր այցելել մոտ 4.5 մլն. ռուս զբոսաշրջիկ[23], ինչի արդյունքում Թուրքիայի եկամուտը կազմել էր մոտ 7 մլրդ. դոլար[24]) և այլն, սակայն էներգետիկայի ոլորտը երկու երկրների համար ունի առանձնահատուկ նշանակություն: Ռուսաստանի պետական բյուջեի ձևավորման մեջ էներգակիրների արտահանման ծավալները և գներն ունեն առանցքային նշանակություն: Թուրքիայի սոցիալ-տնտեսական

[20] նույն տեղում:
[21] Торгово-экономические отношения Турции и России, 16.03.2016, http://moscow.emb.mfa.gov.tr/ShowInfoNotes.aspx?ID=220069.
[22] **Bozbay B. and Topanoğlu E.,** Turkey: Commercial Relations Between Turkey And The Russian Federation, 20 June 2014, http://www.mondaq.com/turkey/x/321956/international+trade+investment/Commercial+Relations+Between+Turkey+And+The+Russian+Federation.
[23] **Öniş Z. and Yılmaz Ş.,** Op. cit.
[24] В Турции оценили возможные убытки от российских санкций в 20 миллиардов долларов, 30.11.2015, https://lenta.ru/news/2015/11/30/turk/.

զարգացման վերջին տարիների տեմպերն ապահովելու համար, ըստ Միջազգային էներգետիկական գործակալության (IEA), 2030թ. անհրաժեշտ կլինի ապահովել 237 մլն. տոննան գերազանցող նավթային պահանջներ[25]: Կարող է թվալ, որ երկու երկրների շահերն այդ ոլորտում լիովին համընկնում են: Առավել ևս, որ ռուսական նավթը ապահովում է Թուրքիայի կարիքների 29 տոկոսը և ռուսական «Երկնագույն հոսք» խողովակաշարով է Թուրքիան ստանում բնական գազի պահանջարկի 63 տոկոսը: Սակայն երկու երկրների համար էլ այս ոլորտի արտաքին քաղաքական բաղադրիչը պակաս կարևոր չէ, քան ներքին տնտեսական նշանակությունը: Ավելին, հենց արտաքին քաղաքական բաղադրիչով է պայմանավորված Ռուսաստանի և Թուրքիայի շահերի բախումն այս ոլորտում: Էներգակիրների արտահանումը Ռուսաստանի արտաքին և անվտանգության քաղաքականության առանցքային «գործիքներից» է[26]: Մոսկվան ձգտում է «էներգետիկ դիվանագիտության» օգնությամբ վերականգնել գերտերության կարգավիճակը[27]: ԽՍՀՄ նմանությամբ: Սակայն դա այսօր անելն ավելի բարդ է, քանի որ, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, ներկայիս Ռուսաստանի տարածքից դուրս են ածխա-ջրածնային հարուստ պաշարներ ունեցող երկու տարածաշրջաններ՝ կասպյան ավազանն ու Կենտրոնական Ասիան: Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցության ապահովման գերխնդիրը լուծելու համար պահանջվում է վերահսկողություն ունենալ այդ տարածաշրջաններից նավթի և գազի՝ դեպի միջազգային շուկաներ արտահանման ուղիների վրա: Իսկ դրա համար Մոսկվան պետք է լուծի երկու ենթախնդիր՝ այդ պաշարներն ունեցող երկրների հետ հաստատել համապատասխան հարաբերություններ և չեզոքացնել Եվրամիության ձգտումները՝ էներգակիրների պահանջները բավարարելու, Ռուսաստանի ազդե-

---

[25] **Шангараев Р.Н.,** Взаимодействие России и Турции в сфере энергетики, *Турция: новые реалии во внутренней политике и участие в региональных геополитических процессах, под ред. В.А. Аваткова, С.Б. Дружиловского, А.В. Федорченко.* М.: МГИМО-Университет, 2014, с. 243.

[26] **Blank S.,** Russian energy and Russian security, *The Whitehead Journal of Diplomacy and International Relations*, 2011, **12,** 1, 173-188.

[27] **Ozkan G.,** Post-Cold War Turkish Foreign Policy in the Caspian Region within the Context of Pipeline Geopolitics and Geoeconomics, *International Journal of Social Science and Humanity,* 2015, **5**, **7**, July p. 635.

ցությունը նվազեցնելու նպատակով ներկրման աղբյուրների և ուղիների բազմազանեցման հնարավորություններն օգտագործելու ուղղությամբ, որոնք առաջացել են այդ տարածաշրջաններում անկախ պետությունների ձևավորման արդյունքում: Իհարկե, Եվրամիությունն այդ խնդիրը լուծելու համար ունի երկու այլ տարբերակ ևս՝ արաբական երկրներից կամ Իրանից էներգակիրների ներմուծման միջոցով, սակայն Մերձավոր Արևելքում լարվածության խորացումն ու նոր՝ սիրիական օջախի ավելանալը, ինչպես նաև Իրանի հետ հարաբերությունների լիարժեք կարգավորման հեռանկարների անհստակությունը գրեթե բացառում են տեսանելի ապագայում այդ տեսական հնարավորությունների օգտագործումը: Սակայն ԽՍՀՄ փլուզումը Ռուսաստանի համար առաջացրել է ևս մեկ լուրջ դժվարություն: Բելառուսը և, հատկապես, Ուկրաինան, որոնց տարածքներով են անցնում դեպի Եվրոպա ձգվող խողովակաշարերը, փորձում են իրենց օգուտներն ստանալ Ռուսաստան-Եվրամիություն էներգետիկ մրցակցություն-«համագործակցությունից»: Թեև «Հյուսիսային հոսք» խողովակաշարի կառուցումը որոշ այլընտրանք ապահովեց, սակայն խնդրի լիարժեք լուծման համար անհրաժեշտ էր կառուցել ռուսական գազի տեղափոխման նոր խողովակաշար հարավային ուղղությամբ նույնպես՝ մի կողմից ապահովելով եվրոպական երկրների աճող պահանջները, մյուս կողմից՝ կտրուկ նվազեցնելով Ուկրաինայով և Բելառուսով անցնող խողովակաշարերի քաղաքական նշանակությունը: Այդ նպատակով նախատեսվում էր կառուցել «Հարավային հոսք» անվանված խողովակաշարը, որը պետք է Սև ծովի հատակով ռուսական ափը միացներ բուլղարականին, այնտեղից էլ ռուսական գազը պետք է տեղափոխվեր եվրոպական երկրներ:[28] Միաժամանակ, Մոսկվան այդ խողովակաշարը դիտարկում էր որպես այլընտրանք ԵՄ «Հարավային միջանցք» ծրագրի[29] շրջանակներում առաջարկվող խողովակաշարներին («Նաբուկո», «Անդրադրիատիկ»

[28] **Watkins E.,** Russia to build South Stream natural gas pipeline via Turkey,- *Oil & Gas Journal,* 01.09.2012,http://www.ogj.com/articles/print/vol-110/issue-1a/general-interest/russia-to-build-south.html

[29] **Sartori N.,** The European Commission's Policy Towards the Southern Gas Corridor: Between National Interests and Economic Fundamentals, *Istituto Affari Internazionali*, *IAI Working Papers 1201,* 2012, pp. 6-7

(TAP), «Անդրանատոլիական» (TANAP), «Թուրքիա-Հունաստան-Իտալիա»), հատկապես՝ դրանցից առավել խոշոր «Նաբուկոյին»[30]: Ռուսաստանը համարում էր, որ Բաքու–Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը թուլացրեց իր ազդեցությունը կասպիական նավթային ռեսուրսներին առնչվող խնդիրների լուծման վրա, և «Նաբուկոյի» իրագործումը նույն դերակատարությունը կարող է ունենալ բնական գազի ոլորտում: Այդ պատճառով Մոսկվան ոչ միայն փորձում էր այլընտրանքային գազատար կառուցել, այլև ակտիվացնել իր խողովակաշարերով ադրբեջանական գազի տեղափոխման բանակցությունները՝ փորձելով «Նաբուկոյին» զրկել տեսանելի ապագայում միակ իրական աղբյուրից[31]:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը Ռուսաստանի համար լրացուցիչ հնարավորություն էր ստեղծել՝ «Հարավային հոսք»-ն այդ երկրի սևծովյան ափամերձ տարածքներով անցկացնելու համար: 2011թ. դեկտեմբերին Թուրքիայի կառավարությունը թույլատրեց ռուսական Գազպրոմ ընկերությանը սկսել խողովակաշարի կառուցումը[32՝] պայմանավորված Սամսուն-Ջեյհան նավթամուղի կառուցմանը Մոսկվայի ակնկալվող աջակցությամբ և ռուսական գազի գնի զեղչումով[33]: Ավելի ուշ դա բացառիկ նշանակություն ունեցավ ռուսական գազը հարավային ուղղությամբ Եվրոպա տեղափոխելու հարցում:

ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակցությունը հասավ իր բարձրակետին, երբ Ուկրաինայի նախագահ Յանուկովիչի տապալումից հետո երկրի նոր ղեկավարությունը հստակորեն ձևակերպեց իր անվերապահ արևմտամետ դիրքորոշումը, և Ռուսաստանը, հետագա անշրջելի զարգացումներից խուսափելու նպատակով, գործի դրեց կտրուկ միջոցներ՝ Արևելյան Ուկրաինայի և Ղրիմի ռուսախոս և ռուսամետ բնակչության շրջանում խթանելով անջատողական ձգտում-

---

[30] **Roberts J. M.,** The Black Sea and European energy security, *Southeast European and Black Sea Studies*, 2006, **6**, 2, 207-223.

[31] **Cohen A,** Azerbaijan and U.S. Interests in the South Caucasus: Twenty Years After Independence, *The Geopolitical Scene of the Caucasus: A Decade of Perspectives: Edited by Diba Nigâr Göksel & Zaur Shiriyev*, İstanbul, 2013, p. 61.

[32]**Watkins E.,** Op. cit.; **Okumuş O.,** Russia Winner in Energy Transit Deal With Turkey, 10.07.2013, http://www.al-monitor.com/pulse/fr/originals/2013/07/russia-turkey-energy-cooperation-south-stream.html.

[33] **Raufoglu A.,** Op. cit.

ները: Երբ այդ զարգացումները հանգեցրեցին զինված բախումների, Միացյալ Նահանգները լուրջ պատժամիջոցներ կիրառեցին Ռուսաստանի նկատմամբ, որոնց միացավ նաև ԵՄ-ն: Իհարկե, կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Ղրիմի միացումը Ռուսաստանին ուժեղացնում է վերջինիս դիրքերը Սև ծովի ավազանում, որը համարվում է նաև Թուրքիայի շահերի գոտի, և որտեղ Անկարան կարևոր դերակատարություն ունի: Այդուհանդերձ, թեև Թուրքիան հայտարարեց, որ պաշտպանում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը, սակայն Ռուսաստանի նկատ-մամբ սուր քննադատություն չդրսևորեց: Ըստ Ս. Դեմիրթաշի, «Թուրքիան չի վտանգի Ռուսաստանի հետ իր հարաբերությունները Ղրիմի համար»[34]: Ավելին, Անկարան չմիացավ ուկրաինական ճգնաժամի պատճառով Ռուսաստանի դեմ ԱՄՆ-ի և ԵՄ-ի կիրառած պատժամիջոցներին: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մ. Չավուշօղլուն նշել էր, որ Թուրքիան չի ցանկանում միանալ Ռուսաստանի դեմ ԵՄ պատժամիջոցներին՝ ընդգծելով, որ Մոսկվան Թուրքիայի կարևոր առևտրային գործընկեր է: Նա նաև ԵՄ մյուս երկրներին կոչ էր արել լինել «իրատես», փորձել հասկանալ, թե ինչ կարող են անել առանց ռուսական գազի՝ նշելով, որ «յուրաքանչյուր երկիր պետք է հաշվի առնի սեփական շահերը»[35]: Ավելի ճշգրիտ էր Թուրքիայի ֆինանսների նախարար Ն. Զեյբեքչիի գնահատականը. «Մոսկվայի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև ներկայիս ճգնաժամը հնարավորություն է Անկարայի համար»[36]:

Կարող է թվալ, որ Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը և, հատկապես, դրան ԵՄ միանալը շատ նպաստավոր էր «Նաբուկոյի» համար՝ «Հարավային հոսք»-ի հետ մրցակցության հարցում, քանի որ դրա հետևանքով Բրյուսելն անդամ երկրներից պահանջեց չմասնակցել «Հարավային հոսք»-ի կառուցման ծրագրին: Բուլղարիան հայտարարեց, որ դուրս է գալիս ծրագրից (այդ երկրի

[34] **Demirtas S.,** Turkiye, Kirim'da Rusya ile iliskilerini riske atmayacak, *BBC Turkce*, 15.03.2014 , www.bbc.co.uk/turkce/haberler/2014/03/140315_kirim_turkiye.shtml.

[35] Turkey Refuses to Join Anti-Russia EU Sanctions for Economic Reasons, 11.02.2015, http://sputniknews.com/politics/20150211/1018132862.html.

[36] **Michalopoulos S.,** Greece accuses Turkey of exploiting Russian EU Food Ban, 11.08.2014, http://www.euractiv.com/section/agriculture-food/news/greece-accuses-turkey-of-exploiting-russian-eu-food-ban.

տարածքով պետք է անցներ գազատարի եվրոպական հատվածի սկզբնամասը) և թվաց, թե Մոսկվան հայտնվել է անելանելի իրավիճակում, քանի որ մեծ էին լինելու և տնտեսական կորուստները (ծրագրի նախապատրաստման համար ծախսվել էին տարիներ ու զգալի ֆինանսական միջոցներ), և քաղաքականը, քանի որ Ուկրաինայի հետ կապված խնդրում Ռուսաստանը զրկվելու էր շատ կարևոր լծակից: Այդուհանդերձ, Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը 2014թ. վերջին, Անկարա կատարած այցի ժամանակ հրապարակեց բարդ խնդրի հանգուցալուծման Մոսկվայի համար միակ, բայց իրատեսական լուծումը: Նա հայտարարեց, որ Ռուսաստանը փակում է «Հարավային հոսք» ծրագիրը և սկսում է իրագործել մեկ այլ՝ «Թուրքական հոսք» ծրագիրը[37]: Իհարկե, դա բոլորովին նոր ծրագիր չէ, քանի որ առաջարկվում է «Հարավային հոսքով» տեղափոխելու համար նախատեսված ամբողջ գազը (63 մլրդ խորանարդ մետր) նույն ճանապարհի սկզբնական հատվածով՝ Սև ծովի հատակով անցնող գազատարով, տեղափոխել և վաճառել Թուրքիային: Եվրոպան ստիպված կլինի այդ գազը գնել Անկարայից, քանի որ Ռուսաստանն այլ բան չի առաջարկելու իր գազի պաշարների զգալի մասը Մոսկվայից գնող եվրոպական երկրներին, միաժամանակ, Թուրքիայից գազը չգնելու լուրջ հիմնավորում չի լինելու: 2015թ. ապրիլին Թուրքիայի, Հունաստանի, Մակեդոնիայի, Սերբիայի և Հունգարիայի արտաքին գործերի նախարարները Բուդապեշտում քննարկել են «Թուրքական հոսք» ծրագրում իրենց երկրների մասնակցության հարցը և հայտարարել են, որ կմասնակցեն ծրագրին: Սակայն, այդ ուղղությամբ ևս ճնշումները չուշացան: ԵՄ ընդլայնման և հարևանության քաղաքականության հարցերով եվրահանձնակատար Յ. Հանը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության հարցում եվրոպական երկրների վրա Թուրքիայի հարձակումները միայն բարդացնում են ԵՄ-

[37] **Bierman S., Arkhipov I. and Mazneva E.,** Putin Scraps South Stream Gas Pipeline after EU Pressure, *Bloomberg*, 02.12. 2014. http://www. bloomberg.com/news/2014-12-01/putin-halts-south-stream-gas-pipeline-after-pressure-from-eu. html.

ին Թուրքիայի անդամակցության հարցը[38]: Եվրախորհրդարանի ընդունած բանաձևը՝ Ցեղասպանության տարելի-ցի կապակցությամբ, ևս հաստատում է Անկարայի նկատմամբ ԵՄ կոշտացող վերաբերմունքի մասին:[39] Ըստ Հունաստանի արտադրական բարեփոխման, շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարար Պ. Լաֆազանիսի[40], ԱՄՆ Պետդեպարտամենտի հատուկ բանագնաց Ա. Հոքսթայնի հետ բանակցություններում վերջինս հայտարարել է, որ Միացյալ Նահանգների համար «Թուրքական հոսքի» իրագործումը ցանկալի չէ և Հունաստանին խորհուրդ է տվել հրաժարվել այդ ծրագրից ու կենտրոնանալ TAP գազատարի վրա: Հունաստանին կարող են առաջարկել նաև մասնակցել TANAP ծրագրին, որի իրականացման վերաբերյալ դեռևս 2012թ. հունիսի 26-ին Թուրքիայի և Ադրբեջանի նախագահները ստորագրել էին համաձայնագիր: Ըստ նախագծի, այդ գազամուղով նախատեսվում է ադրբեջանական Շահ Դենիզ-2 հանքավայրից Թուրքիա փոխադրել 16 մլրդ խորանարդ մետր գազ, որից 6-ը՝ Թուրքիայում սպառելու, մնացածը՝ Եվրոպա արտահանելու է համար: Ակնհայտ է, որ այդ գազատարը չի կարող բավարարել Եվրոպայի պահանջները և ԵՄ-ի համար սոսկ դեմքը փրկելու նպատակ ունի՝ «Հարավային գազային միջանցքը» որպես ԵՄ էներգետիկ անվտանգության կարևոր բաղադրիչ ներկայացնելու ենթատեքստում: Այդուհանդերձ, ավելի ուշ Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Թ. Յըլդըզը ևս մեկ անգամ հաստատեց Անկարայի հավատարմությունն ինչպես TANAP և TAP նախագծերին՝ որպես «Հարավային գազային միջանցքի» շղթա հանդիսացող հիմնական տարրերի, այնպես էլ թուրք-ռուսական էներգետիկ համագործակ-

[38] ԵՄ. Ցեղասպանության հարցում Անկարայի վարքը խոչընդոտում է իր եվրաինտեգրման պլաններին: Մատչելի է http://news.am/arm/news/264682.html, 30.04.2015

[39] Armenian genocide centenary: MEPs urge Turkey and Armenia to normalize relations, available at http://www.europarl.europa.eu/news/en/news-room/content/20150413IPR41671/html/Armenian-genocide-centenary-MEPs-urge-Turkey-and-Armenia-to-normalize-relations, 15.04.2015

[40] US urges Athens to focus on TAP, not Turkish Stream, available at http://www.infobalkans.com/2015/05/08/us-urges-athens-focus-tap-not-turkish-stream, 14.05.2015

ցությանը[41]: Պատահական չէ, որ TANAP գազամուղն իր սահմանափակ հզորության պատճառով Ռուսաստանի կողմից չարժանացավ այնպիսի հակազդեցության, ինչպիսին եղավ «Նաբուկոյի» դեպքում:

Հունաստանի կառավարությունը համարում է, որ «Թուրքական հոսքն» է իր երկրի համար շահավետ է և ջանքեր է գործադրելու դրա իրագործման համար:[42] Հաշվի առնելով Հունաստանի բարդ ֆինանսա-տնտեսական վիճակը՝ կարելի է ենթադրել, որ այդ երկիրը շատ ավելի վճռական կլինի, քան «Հարավային հոսքից» հրաժարված Բուլղարիան: Սակայն «Նաբուկոյի» անհաջողությունը կապված է նաև մեկնարկային իրավիճակի ոչ ճիշտ գնահատման հետ:[43] Այդ նախագիծը մշակողները հաշվի չեն առել էներգետիկ պաշարների աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող տեղափոխման երեք հիմնական գործոնների՝ «դոնոր» երկրների պաշարների իրական չափերի, աշխարհագրական և քաղաքական իրողությունների համադրման հնարավորությունները: Հակառակ դեպքում կպարզեին, որ աշխարհաքաղաքական իրական մատչելիություն ունեցող Ադրբեջանի հետախուզված պաշարները շատ քիչ են տեսանելի ապագայում ԵՄ կարիքների ապահովման տեսակետից: Ըստ կանխատեսումների, 2006 թվականից մինչև 2030թ. ընկած ժամանակահատվածում Եվրամիություն բնական գազի ներմուծումը կաճի 87 տոկոսով[44]: Կասպից ծովի կարգավիճակի հետ կապված խոչընդոտների պայմաններում չափազանց հիպոթետիկ են միջին-ասիական գազի հարուստ պաշարները Ադրբեջանի տարածքով Եվրոպա տեղափոխելու հնարավորությունները: Առավել ևս, որ այդ պաշարները արևելք տեղափոխելու համար չկան ոչ ծավալային, ոչ երթուղիներով պայմանավորված սահմանափակումներ: Իրանական հարուստ պաշարների տեղափոխման հնարավորություններն էլ խիստ

---

[41] **Peker E.,** Russia, Turkey Complete Initial Turk Stream Gas Pipeline Talks, *The Wall Street Journal*, 11.12.2014, www.wsj.com/articles/russia-turkey-complete-initial-turk-stream-gas-pipeline-talks-1418288422.

[42] США прямо заявили, что не хотят участия Греции в «Турецком потоке», Доступен www.regnum.ru/news/1923051.html

[43] **Torosyan T., Arshakyan G.**, Turkey's Modern Foreign Policy: New Challenges and New Opportunities, *Armenian Journal of Political Science,* 2015, 2, 73-90.

[44] **Söderbergh B., Jakobsson K., and Aleklett K.,** European energy security: An analysis of future Russian natural gas production and exports,- *Energy Policy*, 2010, **38**, 12, 7827-7843.

կասկածելի են տեսանելի ապագայում, քանի որ Արևմուտքի, Ադրբեջանի և Թուրքիայի հետ այդ երկրի ոչ միանշանակ հարաբերությունների հաղթահարման հեռանկարները: Պատկերն ամբողջացնում է Թուրքիայի խիստ գործնապաշտական արտաքին քաղաքականությունը՝ յուրաքանչյուր կոնկրետ խնդրի և իրավիճակի հետ կապված: Ստեղծված իրավիճակը պաշտոնական Անկարայի համար թվում է շատ խոստումնալից՝ էներգակիրների տեղափոխման խոշոր հանգույց դառնալու տեսակետից, որը կարող է աշխարհաքաղաքական մեծ նշանակություն ունենալ: Դժվար չէ նկատել, որ Մոսկվան դրանում կարող է ունենալ առանցքային դերակատարություն՝ որպես առաջին փուլի համար «Թուրքական հոսքով» Եվրոպայի սահմանին անխափան խողովակաշարով անհրաժեշտ ծավալի գազի տեղափոխման երաշխավոր: Հենց դրանով է պայմանավորված 2008 թվականից ի վեր ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակում Անկարայի «ռուսամետ» քայլերի շարքը շարունակող հրաժարումը՝ Արևմուտքի հակառուսական պատժամիջոցներին միանալուց, ինչպես նաև «Թուրքական հոսքի» կառուցման համար բացառիկ հնարավորության ստեղծումը Ռուսաստանի համար:

Աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը էներգետիկ ռեսուրսների տեղափոխման հնարավորությունների վրա

«Թուրքական հոսքի» հեռանկարներից ոգևորված Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանն առաջարկել է ստեղծել Ռուսաստան-Թուրքիա-Իրան դաշինք՝ էապես փոխելով աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում, նկատի ունենալով այդ տարածաշրջանում գազի հանքավայրերի հետ կապված նոր զարգացումները: Իրանը Քաթարի հետ սկսել է գազի արդյունահանումը «Հյուսիսային Պարս» հանքավայրում, որը խոշորագույնն է աշխարհում[45]: Հեռանկարներն ավելի ամբողջական են դարձնում Կիպրոսի, Լիբանանի և, հատկապես, Իսրայելի առափնյա տարածքներում հայտնաբերված գազի զգալի պաշարները: Այդ երկրները ցանկանում են իրենց գազն

[45] Станислав Тарасов. Станет ли Путин Лениным, а Эрдоган – Ататюрком. Доступно www.regnum.ru/news/1872663.html

առաջիկայում արտահանել Եվրոպա, ինչը հնարավոր է երկու ճանապարհով: Առաջինը ցամաքային է և անցնում է Թուրքիայի տարածքով, երկրորդը՝ Միջերկրական ծովի հատակով նախ հասցնելով Կիպրոս, ապա՝ Հունաստան, այնուհետև՝ ցամաքով Եվրոպա: Անկարան մի քանի փաստարկներ ունի այս հոսքերն իր տարածքով ուղղորդելու համար՝ կիպրական չլուծված հակամարտությունը, Հունաստանի բարդ ֆինանսատնտեսական վիճակը և այլն: Սակայն կան լուրջ դժվարություններ թուրքական տարբերակի համար ևս: Էներգակիրների հսկայական հոսքերի կառավարումը պահանջում է համապատասխան ֆինանսական և քաղաքական ռեսուրսներ: Առաջինի տեսակետից Էրդողանի առաջարկած վերոհիշյալ եռակողմ դաշինքը լավ հեռանկարներ ունի: Սակայն այն իրագործելու համար պետք է համապատասխան գին վճարել. Ռուսաստանը ոչ մի կերպ չի համաձայնի, որ TANAP գազամուղով տեղափոխվի նաև իրանական գազը, ինչն այդ խողովակաշարով տեղափոխվող էներգակիրները կդարձնի ռուսական գազի այլընտրանք Եվրոպայի համար: Հետևաբար Անկարան պետք է լուծի Ադրբեջանի հետ շահերի բախման խնդիր, քանի որ վերջինիս կարևորությունը Եվրոպայի համար կարող է առարկայական հիմքեր ստանալ միայն իրանական գազը TANAP գազամուղով տեղափոխելու դեպքում: Իսրայելյան գազի տեղափոխման համար էլ Թուրքիան պետք է վերականգնի վերջին տարիներին խաթարված Անկարայի համագործակցության ավանդույթներն այդ երկրի հետ՝ հեռանալով մուսուլմանական աշխարհի հետ հատուկ հարաբերություններից: Սակայն Թուրքիայի համար բարդությունները ոչ միայն ապագայի հարց են, այլև ներկայի: Թեև սիրիական ճգնաժամն ուղիղ կապ չունի ռուս-թուրքական հարաբերությունների առանցքը կազմող էներգակիրների տեղափոխման խնդիրների հետ, սակայն կարող է դառնալ այդ համագործակցության խափանման ամենաազդեցիկ աշխարհաքաղաքական գործոնը:

Թուրքիայի համար սիրիական ճգնաժամը կարևոր է երկու չափումներով: Նախ, սեփական խնդիրների լուծման տեսակետից՝ Անկարան մի կողմից հնարավորություններ է փնտրում՝ ամրապնդելու իր դիրքերը որպես մերձավորարևելյան տարածաշրջանային «գերտերություն», մյուս կողմից՝ ձգտում է սանձել քրդական ինքնորոշ-

ման ցանկացած դրսևորում[46]: Միաժամանակ, Սիրիայում Ռուսաստանի ու ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի կոշտ բախման պայմաններում Թուրքիայից պահանջվում է դրսևորել մեծ ճկունություն՝ մեկի կամ մյուսի կողմից դժգոհությունների ու դրանից բխող պատժիչ քայլերի չարժանանալու համար: Թուրքիան Սիրիայի ներքին հակամարտության մեկնարկի հենց սկզբից հստակ հակաասադյան քաղաքականություն է վարում՝ լրջորեն աջակցելով Ասադի դեմ պայքարող ուժերին, այդ թվում՝ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորմանը, ինչպես նաև դիվանագիտական ու քարոզչական պայքար մղելով պաշտոնական Դամասկոսի դեմ[47]: Արևմտյան պաշտոնյաները հաճախ են մեղադրում պաշտոնական Անկարային այն բանում, որ վերջինիս գիտությամբ ու թողտվությամբ, իսկ հաճախ՝ նաև թուրքական հատուկ ծառայությունների օժանդակությամբ, զինված ահաբեկիչները և նրանց ուղարկվող զինամթերքի մեծ մասը Թուրքիայով անարգել ներթափանցում է Սիրիա[48]:

Ռուսաստանի հետաքրքրությունը Սիրիայում նույնպես մի քանի բաղադրիչ ունի: ԽՍՀՄ փլուզումից հետո դա առաջին դեպքն է, երբ Մոսկվան կարևոր դերակատարություն ունի իր սահմաններից հեռու ծավալվող աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող գործընթացում՝ զինված ուժերի կիրառմամբ: Հետևաբար, հաջողությունը Մոսկվայի համար ունի բացառիկ նշանակություն ինքնահաստատման և միջազգային ասպարեզում գլխավոր դերակատարներից մեկը լինելու ձգտումների տեսակետից: Ըստ պաշտոնական դիրքորոշման, Ռուսաստանն անընդունելի և խիստ վտանգավոր է համարում արմատական խմբավորումների ամրապնդումն ու դրանց գործունեության արդյունքում Սիրիայում պետականության փլուզման հեռանկարը, որը Ռուսաստանի և հետխորհրդային հարևան պետությունների

---

[46] **Маркедонов С.,** Российско-турецкие отношения и проблемы безопасности Кавказского региона, 30.05.2016, http://www.globalaffairs.ru/valday/Rossiisko-turetckie-otnosheniya-i-problemy-bezopasnosti-Kavkazskogo-regiona-18188.

[47] **Brooker P. S.,** Russia vs. Turkey: Competition For Influence, 12.12.2015, http://www.valuewalk.com/2015/12/russia-vs-turkey-competition-for-influence/.

[48] **Hubbard B., Yeginsu C.,** After Opening Way to Rebels, Turkey Is Paying Heavy Price, *The New York Times,* 24.06.2014, http://www.nytimes.com/2014/06/25/world/europe/after-opening-way-to-rebels-turkey-is-paying-heavy-price.html.

համար կարող է լուրջ սպառնալիք ստեղծել: Մոսկվան Ասադի կառավարությունը համարում է լեգիտիմ իշխանություն և իր նպատակներին փորձում է հասնել՝ աջակցելով սիրիական իշխանությանը: Ակնհայտ է, որ Թուրքիայի և Ռուսաստանի ձգտումները Մերձավոր Արևելքում հակոտնյա են, սակայն սիրիական ճգնաժամի սկզբնական փուլում թուրք-ռուսական բարձր մակարդակի երկկողմ հարաբերությունները հնարավորություն էին տալիս կողմերին համադրել տնտեսական խնդիրները և աշխարհաքաղաքական մրցակցությունը՝ նվազեցնելով քաղաքական հարցերի շուրջ ունեցած տարաձայնությունների ազդեցությունը բազմաոլորտ համագործակցության վրա[49]:

2014թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի ղեկավարած կոալիցիան, որի կազմում էին 60 պետություններ, իրաքյան ցամաքային ուժերին աջակցելու նպատակով սկսեց օդային հարվածներ հասցնել «Իսլամական պետության» դիրքերին և ենթակառուցվածքներին[50]: Այդուհանդերձ, Միացյալ Նահանգների գլխավոր նպատակներից մեկը Ասադի հեռացումն էր իշխանությունից՝ սիրիական հակակառավարական խմբավորումներին ցուցաբերվող օգնությամբ, ինչի արդյունքում պայքարը «Իսլամական պետության» դեմ մեծ արդյունավետություն չուներ:

2015թ. սեպտեմբերի 30-ին Ռուսաստանի Դաշնության Դաշնային խորհուրդը համաձայնություն տվեց, որ նախագահ Վ. Պուտինը Սիրիայի նախագահի պաշտոնական խնդրանքի հիման վրա անհրաժեշտության դեպքում Սիրիայում օգտագործի ռուսական ռազմաօդային ուժերը՝ նպատակ ունենալով օդից օգնություն ցուցաբերելու այդ երկրի ցամաքային զորքերին:[51] Հակամարտության մեջ Ռուսաստանի ռազմաօդային ուժերի ներգրավումը՝ «Իսլամական պետության» և սիրիական ընդդիմության դիրքերի զանգվածային ռմբակոծությունների նպատակով, առաջացրեց Արևմուտքի և Թուրքիայի դժգոհու-

---

[49] **Öniş Z. and Yılmaz Ş.,** Op. cit.

[50] U.S. Department of State, *"Joint statement issued by partners at the Counter-ISIL Coalition Meeting",* December 3, 2014.
http://www.state.gov/r/pa/prs/ps/2014/12/234627.htm).

[51] Совет Федерации разрешил использование российских войск в Сирии, 30.09.2015, https://lenta.ru/news/2015/09/30/za/.

թյունը և էլ ավելի սրեց իրավիճակը[52]: Ռուս-թուրքական հարաբերություններում աճող լարվածությունը վերածվեց ճգնաժամի 2015թ. նոյեմբերի 24-ին, երբ Սիրիայում՝ Թուրքիայի հետ սահմանին մոտ, թուրքական ռազմաօդային ուժերը խոցեցին ռուսական Սու-24 ռմբակոծիչը[53]: Ռուսաստանն արձագանքեց շատ կոշտ և մեկ ամիս անց նախագահ Վ. Պուտինը ստորագրեց Թուրքիայի դեմ տնտեսական պատժամիջոցներ սահմանող հրամանագիր[54], իսկ Անկարան սահմանափակեց ռուսական ռազմանավերի մուտքը Բոսֆոր[55]: Ռուսական պատժամիջոցների լուրջ հետևանքների մասին է վկայում երկու երկրների միջև ապրանքաշրջանառության կտրուկ նվազումը. 2014թ. այն կազմել էր մոտ 30 մլրդ. դոլար, 2015թ.՝ 23 մլրդ. դոլար, իսկ 2016թ. առաջին չորս ամիսներին՝ ընդամենը 4.8 մլրդ. դոլար[56]: 2015թ. դեկտեմբերին Թուրքիայի փոխվարչապետ Մ. Շիմշեքը հայտարարել էր, որ ռուսական պատժամիջոցներից թուրքական տնտեսության վնասները կարժենան մոտ 9 մլրդ. դոլար[57]: Մեծապես վտանգված էր

---

[52] **Khoury G.,** Putin's Road to Disappointment in Syria, 01.10.2015, https://medium.com/the-eastern-project/putin-s-road-to-disappointment-in-syria-2f53ba484e1f#.hvp0853bg; **Stewart W. and Tomlinson S.,** Putin signs decree drafting 150,000 conscripts into the Russian military... as Iran and Hezbollah prepare major ground offensive in Syria with air support from Moscow's bombers, 02.10.2015, http://www.dailymail.co.uk/news/article-3255876/Russia-pouring-gasoline-fire-Syria-s-civil-war-says-America-Putin-defies-West-drops-bombs-non-ISIS-forces-fighting-Assad.html.

[53] **Скоробогатый П.,** В Сирии сбит российский бомбардировщик, 24.11.2015, http://expert.ru/2015/11/24/turetskie-pvo-sbili-voennyij-samolet/; **Shaheen K., Walker S.,** Putin condemns Turkey after Russian warplane downed near Syria border, *The Guardian*, 24.11.2015, https://www.theguardian.com/world/2015/nov/24/turkey-shoots-down-jet-near-border-with-syria.

[54] Владимир Путин подписал указ о введении санкций против Турции, 28.12.2015, http://izvestia.ru/news/597508.

[55] С 1 июня Турция ввела визы для дальнобойщиков из России, 02.06.2016, http://informing.ru/2016/06/02/s-1-iyunya-turciya-vvela-vizy-dlya-dalnoboyschikov-iz-rossii.html.

[56] Товарооборот России с Турцией в 2015 году сократился почти на четверть, 09.02.2016, http://www.interfax.ru/business/493872; **Милюкова Я., Химшиашвили П., Левинская А.,** Семь месяцев в ссоре: сколько Россия и Турция потеряли на конфликте, 27.06.2016, http://www.rbc.ru/economics/28/06/2016/577157b89a7947239346aba3.

[57] Turkish economy risks losing $9 billion over Russia crisis: Deputy PM, 07.12.2015, http://www.hurriyetdailynews.com/turkish-economy-risks-losing-9-

նաև աննախադեպ հեռանկարներ խոստացող «Թուրքական հոսքի» ճակատագիրը: Սակայն Թուրքիայի խնդիրները միայն Ռուսաստանի պատժամիջոցներով չէին սահմանափակվում: Ըստ Ա. Այդընթաշբաշի, Էրդողանը հայտնվել էր դիվանագիտական առումով մեկուսացված վիճակում: Թուրքիան վերջին տարիներին չի կարողանում ձերբազատվել մեկուսացվածության հատուկ զգացումից, քանի որ նրա «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունն իսկապես փոխել էր իրավիճակը՝ չէր մնացել որևէ հարևան, որի հետ չլինեն խնդիրներ[58]: Բազմաթիվ և տարավեկտոր բարդ գործընթացներում ներգրավվելով՝ Թուրքիան զգալիորեն մեծացրել էր անհաջողության վտանգը: Առավել ևս, որ ըստ Դ. Ֆիլիպսի, «Բարդ խնդրի բախվելով՝ Անկարան հազվադեպ է լավ համակարգված ռազմավարության ունակություն և հեռատեսություն ցուցաբերում: Թուրքերը լավ վարչարարներ են, երբ հարցը վերաբերում է ամենօրյա գործերին, սակայն տեսլական և ճկունություն պահանջող նախաձեռնո-ղական նուրբ քաղաքականություն մշակելու հարցում նվազ ունակ են:»[59]

Կուտակված լուրջ խնդիրները՝ երկրում առկա քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակը, փախստականների հիմնախնդիրների, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում Ռուսաստանի հետ հավակնոտ ծրագրերի պատճառով ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների վատթարացումը, վեց տարվա դիվանագիտական մրցակցությունից հետո Իսրայելի հետ պարտադրված հաշտեցման գործընթացը, «նեոսմանիզմի» քաղաքականության տապալումը[60] և Ուկրաինայի միջոցով Սև ծովում Ռուսաստանին այլընտրանք ստեղծելու փորձի ձախողումը իրավիճակը դարձրել էին խիստ վտանգավոր: Հաշվի առնելով Թուրքիայի առջև ծառացած բարդ մարտահրավերների հնարավոր ծանր հետևանքները, նախագահ Ռ. Թ. Էրդողանը 2016թ.

---

billion-over-russia-crisis-deputy-m.aspx?pageID=238&nID=92187&NewsCatID=344.

[58] **Tavernise S.,** Seeking to Improve Ties With Russia, Turkey Apologizes for Downing Warplane, *The New York Times*, 27.06.2016, http://www.nytimes.com/2016/06/28/world/europe/russia-turkey-erdogan-putin.html?_r=0.

[59] **Ֆիլիպս Դեյվիդ Լ.,** Բարձրաձայնելով անցյալը. Ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը: Երևան, 2010թ., էջ 53-54:

[60] **Torosyan T., Arshakyan G.**, Op. cit.

հունիսի 27-ին նամակ հղեց Վ. Պուտինին՝ ներողություն խնդրելով Սու-24 ռմբակոծիչի կործանման համար[61]: Ըստ Թ. Վուդի, Ռ. Թ. Էրդողանի այդ որոշումը թուրքական կողմի լիակատար կապիտու-լյացիան էր և ամրապնդեց Վ. Պուտինի կերպարը՝ որպես ուժեղ առաջնորդ, ինչը հերթական անգամ ցույց տվեց, որ սպասողական քաղաքականության առումով Ռուսաստանը մրցակից չունի, և այս քաղաքականությունը կարող է փոխվել միայն անմիջական ուժի կիրառման սպառնալիքի դեպքում[62]: Ռուս-թուրքական հարաբերություններում 7 ամիս տևած ճգնաժամից հետո սկսվեց հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ երկու երկրների համար ստեղծված բավական բարդ աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակի ազդեցությամբ: Սակայն դրանով լարվածությունը թուլացավ միայն մեկ՝ ռուսական ուղղությամբ: Մինչդեռ, թե ներքաղաքական կյանքում, թե արևմտյան ուղղությամբ խնդիրներն ավելանում են: Թուրքիայում 2016 թ. հուլիսի 15-ի լույս 16-ի գիշերը իրագործված հեղաշրջման ձախողված փորձը զգալի արձագանք ունեցավ ոչ միայն պետության ներսում, այլև միջազգային ասպարե-զում: Նախագահ Ռ. Էրդողանի կոշտ արձագանքն այդ իրադարձությանը՝ 6000 ձերբակալվածներ, այլախոհ գործիչների ու լրագրողների հալածանքներ, անգամ՝ մահապատիժը վերականգնելու սպառնալիք, առաջ բերեց Արևմուտքի խորացող բացասական վերաբերմունքը[63]:

ԵՄ-ի հետ Անկարայի խնդրահարույց հարաբերություններում իրավիճակը շարունակում է մնալ առանց մոտալուտ բարելավման դրական հեռանկարի: Ավելին, օգոստոսին Վ. Պուտինն ու Ռ. Թ. Էրդողանը հայտարարեցին բոլոր ուղղություններով համագործակցությունը վերականգնելու և Սիրիայի հարցում փոխզիջումների որոնման

[61] **Kravchenko S.,** Kremlin Says Erdogan Apologized for Turkey Shooting Down Jet, 27.06.2016, http://www.bloomberg.com/news/articles/2016-06-27/kremlin-says-erdogan-apologized-for-turkey-shooting-down-bomber.

[62] **Wood T.,** Putin ascendant over NATO as Turkey turns tail, *The Washington Times,* 30.06.2016, http://www.washingtontimes.com/news/2016/jun/30/vladimir-putin-uses-nato-weakness-for-russia-domin/.

[63] **Bodkin H., Millward D., Ensor J., Rothwell J.,**Turkey coup attempt: World leaders warn President Erdogan not to use uprising as excuse for crackdown as more than 6,000 arrested, *The Telegraph*, 18.07.2016, http://www.telegraph.co.uk/news/2016/07/17/turkey-coup-plot-president-erdogan-rounds-up-thousands-of-soldie/.

պատրաստակամության մասին, ինչն անհանգստություն առաջացրեց Արևմուտքում, քանի, որ Թուրքիայի նախագահը ռազմական հեղաշրջման փորձից հետո բանակցություններ էր վարում ոչ թե ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների, այլ Ռուսաստանի Դաշնության նախագահի հետ[64]: Ընդ որում, կարևոր է պարզել, արդյո՞ք դա Անկարայի՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի դեմ «ռուսական խաղաքարտի» օգտագործման հերթական փորձն է, թե Թուրքիայի արտաքին քաղաքականության իրական շրջադարձ: Ըստ Ա. Կրուկի, «Եթե Թուրքիան իսկապես նպատակաուղղված է շրջվել դեպի Ռուսաստանը, ապա, իհարկե, դա մեծ ռազմավարական նշանակություն կունենա: Դա կնշանակի Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի գերիշխանության վերջին իրական հենակետի անհետացում, ինչպես նաև Ռուսաստանի շուրջ ՆԱՏՕ-ի ձևավորած օղակի փլուզում»[65]:

Իհարկե, Արևմուտքը չի կարող թույլ տալ իրադարձությունների նման զարգացում: Եթե Անկարայի ռուսամետ դիրքորոշման դրսևորման առաջին փորձերը՝ հաշվի առնելով դրանց ոչ մեծ և ժամանակավոր հետևանքները, կարող էին և Արևմուտքի կոշտ արձագանքին չարժանանալ, ապա ռուս-թուրքական մերձեցման նոր շրջանը այլ զարգացումներ կարող է ունենալ: Դրա նախանշան կարող է լինել այն հանգամանքը, որ զգալիորեն փոխվել է ԵՄ անդամ երկրների արձագանքը Թուրքիայի ագրեսիվ դրսևորումներին: Եթե նախկինում այդ երկրների քաղաքական վերնախավերը, որպես կանոն, համբերատար սպասում էին թուրքական ագրեսիվության մարմանը, հաճախ էլ փորձում էին ինչ-որ քայլերով խրախուսել դա, ապա այժմ անմիջապես հետևում են արձագանքներ՝ օգտագործելով ամենակոշտ գնահատականները: Մասնավորապես, Գերմանիան և Հոլանդիան ոչ միայն արգելեցին թուրք նախարարների մուտքն իրենց երկրներ՝ տեղի թուրք համայնքների շրջանում սահմանադրական փոփոխությունների օգտին

---

[64] **MacFarquhar N.,** Russia and Turkey Vow to Repair Ties as West Watches Nervously, *The New York Times,* 09.08.2016, http://www.nytimes.com/2016/08/10/world/europe/putin-erdogan-russia-turkey.html

[65] **Крук А.,** Эрдоган между Россией и США. Что будет с идеей неоосманизма, 11.08.2016, http://www.globalaffairs.ru/global-processes/Erdogan-mezhdu-Rossiei-i-SShA-Chto-budet-s-ideei-neoosmanizma-18309.

քարոզարշավ իրականացնելու նպատակով[66], այլև այդ կապակցությամբ Անկարայի պաշտոնական շրջանակների կոպիտ գնահատականներին պատասխանեցին Թուրքիայի իշխանությունների հասցեին շատ կոշտ քննադատությամբ: Ելույթ ունենալով մարտի 27-ին Գերմանիայի Բունդեսթագում կազմակերպված «Quo vadis. Գերմանիա-Թուրքիա» թեմայով համաժողովում՝ Բունդեսթագի նախա-գահ Ն. Լամերթը հայտարարել է. «Այն, ինչ այսօր տեղի է ունենում Թուրքիայում, ոչ թե իրադարձությունների բնականոն ընթացք է, այլ նախապես հաշվարկված պլան: Երկրում, որը ՆԱՏՕ-ի անդամ է և հավակնում է ԵՄ անդամ դառնալ, ոտնահարվում են քաղաքացիական իրավունքները, ժողովրդի կողմից ընտրված պատգամավորները ձերբակալվում են: Թուրքիայում ամառվանից մինչ օրս կարելի է խոսել երկու հեղաշրջման մասին: Առաջինը պետական հեղաշրջում էր, որը տապալվեց, իսկ երկրորդը կազմակերպել է Էրդողանը սեփական երկրի սահմանադրության դեմ: Եվ այս մեկն արդեն հաջողված է թվում: Էրդողանը փաստացի լուծարում է խորհրդարանը՝ ձերբակալելով պատգամավորներին: Նա դա անում է հանրաքվեի միջոցով, որը ուժազրկում է ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանը... Հավանաբար երկար ժամանակ նախապատրաստված սցենարի հիման վրա նախագահ Էրդողանն ու իր ԱԶԿ-ի կառավարությունը նախատեսում են անկայուն, սակայն ժողովրդավարական կարգուկանոնը վերափոխել ամբողջատիրական համակարգի»[67]:

Sparks between Turkey and Holland as Erdogan calls the Dutch 'Nazi remnants' http://www.telegraph.co.uk/news/2017/03/11/erdogan-calls-dutch-fascists-row-turkey-netherlands-escalates/; Polizisten eskortieren türkische Ministerin zur deutschen Grenze http://www.spiegel.de/politik/ausland/niederlande-vs-tuerkei-fatma-betuel-sayan-kaya-nach-deutschland-geschickt-a-1138374.html ; Niederlande verweigern türkischem Außenminister Landeerlaubnis http://www.spiegel.de/politik/ausland/streit-mit-tuerkei-niederlande-verweigern-mevluet-cavusoglu-landeerlaubnis-a-1138332.html ; AKP sagt alle Ministerauftritte in Deutschland ab http://www.spiegel.de/politik/deutschland/tuerkei-regierungspartei-akp-sagt-alle-ministerauftritte-in-deutschland-ab-a-1139758.html

[67] Bundestagspräsident Norbert Lammert: „Zweiter Putschversuch droht erfolgreich zu sein“, https://www.youtube.com/watch?v=h_bSXpY7Ueo; Scharfe Worte gegen Erdoğan, http://www.taz.de/!5396880/

Իրադարձությունների զարգացումը վկայում է, որ թուրք-եվրոպական բարդությունները ոչ միայն չեն թուլանում, այլև ստանում են ինստիտուցիոնալ բնույթ՝ երկկողմ հարաբերություններից տեղափոխվելով եվրոպական կառույցներ: 2017թ. ապրիլին Եվրոպայի խորհուրդը վերականգնեց 2004 թվականին դադարեցված մշտադիտարկման գործընթացը Թուրքիայի նկատմամբ՝ որպես պատասխան սահմանադրական փոփոխությունների[68]: Դա ոչ միայն չզսպեց Էրդողանին, այլև վերջինս սպառնաց երկրում վերականգնել մահապատիժը[69]: Սա միանգամայն նոր որակ է Թուրքիայի և եվրոպական կառույցների հարաբերություններում, քանի որ տասնամ-յակներ շարունակ լարվածություններ ծագելու դեպքում դրանց պատճառները փորձ էր արվում բացատրել ծայրահեղական դիրքորոշում ունեցող ուժերի ակտիվացմամբ, պաշտոնական Անկարան խոստանում էր լուծել խնդիրները՝ Եվրոպայից կորզելով աջակցության հայտարարություններ, տարատեսակ զիջումներ և աջակցություն: Այս նոր իրավիճակն, ամենայն հավանականությամբ, վկայում է, որ Ռուսաստանն ու Թուրքիան այս անգամ ևս, ինչպես մեկ դար առաջ, երկկողմ հարաբերությունները համարում են իրենց արտաքին քաղաքականությունների գլխավոր ուղղությունը տեսանելի ապագայի համար:

Եզրակացություն

Եվրասիական կենտրոնի երկու առավել ակտիվ հատվածներում՝ Հարավային Կովկասում ու Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ փլուզումից հետո ծավալած իրադարձությունների զարգացումները կրում են նոր աշխարհակարգի ձևավորման նպատակ հետապնդող անզիջում պայքարի և էներգակիրների տեղափոխման երթուղիների ու հոսքերի վերանայման կնիքը: Այն հատկապես ընդգծված ազդեցություն ունի Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների վրա,

[68] The functioning of democratic institutions in Turkey, Resolution 2156 (2017), http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=23665&lang=en

[69] Turkey Put on Council of Europe Watchlist Over Rights Record, https://www.bloomberg.com/news/articles/2017-04-25/turkey-put-on-council-of-europe-watchlist-over-rights-record

որոնք ավանդաբար աչքի են ընկել մրցակցային և համագործակցային բաղադրիչների յուրահատուկ համադրությամբ ու հերթագայությամբ:

Դիտարկվող ժամանակահատվածում այդ հարաբերությունները կարելի է պայմանականորեն բաժանել չորս փուլի: Դրանցից առաջինում, որը սկսվեց ԽՍՀՄ փլուզումից հետո և շարունակվեց մինչև 2007թ., Անկարան փորձում էր դառնալ Եվրասիական կենտրոնի երկու տարածաշրջանների՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի ամենաազդեցիկ արտաքին ուժը, սակայն ձախողվեց, քանի որ ներքաղաքական մարտահրավերները հաղթահարած Ռուսաստանն աստիճանաբար վերականգնում էր ազդեցությունը: Երկրորդ փուլի սկիզբ կարելի է համարել 2008թ. վրաց-ռուսական հնգօրյա պատերազմը, որին առնչվող իրադարձությունները բացահայտեցին Անկարայի ռուսամետ նախապատվությունները: Մինչ 2015թ. տևած այս փուլում ռուս-թուրքական հարաբերությունները բուռն զարգացում ունեցան՝ միջազգային հարաբերություններում երկու երկրների խորացող դժվարությունների պատճառով և գայթակղիչ հեռանկարների շնորհիվ: Այդ փուլի ավարտի և ռուս-թուրքական հարաբերություններում ճգնաժամի առաջացման պատճառ դարձավ Մերձավոր Արևելքում ռուսական ռազմաօդային ուժերի՝ Անկարայի համար անցանկալի գործողությունների, ինչպես նաև Միացյալ Նահանգների ու Եվրամիության ճնշումների հետևանքները չեզոքացնելու նպատակով 2015թ. ավարտին իր սահմաններին մերձակա սիրիական տարածքում ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը Թուրքիայի կողմից: Թեև ճգնաժամը կարճ տևեց՝ ընդամենը 7 ամիս, սակայն իր նշանակությամբ այն կարելի է համարել ռուս-թուրքական հարաբերությունների երրորդ փուլ:

2016թ. ճգնաժամի հաղթահարմամբ և համագործակցության վերականգնմամբ, որն առաջին հերթին պայմանավորված էր միջազգային հարաբերություններում Ռուսաստանի և Թուրքիայի զգալի բարդություններով, որոնք արդեն դրսևորում են մեկուսացվածության լուրջ նշաններ, երկու երկրների հարաբերություններում մեկնարկեց ամենաբարդ չորրորդ փուլը: Արևմուտքի հետ Ռուսաստանի հարաբերությունները ոչ միայն չեն բարելավվում, այլև, հատկապես Միացյալ Նահանգների հետ ավելի են լարվում՝ ի հեճուկս այն կանխատե-

սումների, որ Դ. Թրամփի նախագահությունը կհանգեցնի լարվածության նվազմանը: Նոր աշխարհակարգում ազդեցիկ տեղ ունենալու համար Մոսկվան դեռ պետք է ապացուցի, որ կարող է հաղթահարել տարբեր տարածաշրջաններում առկա մարտահրա-վերները՝ սնծովյան տարածաշրջանում՝ Արևելյան Ուկրաինայի և Ղրիմի հակամարտություններ, Մերձավոր Արևելքում՝ սիրիական թնջուկ, Հարավային Կովկասում՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմի վերսկսում:

Թուրքիայի ներուժը կարծես թե չի բավարարում դիմանալու համար այն բազմավեկտոր (որոշ դեպքերում՝ միմյանց հակոտնյա) հարաբերությունների ծանրությանը, որը ձևավորվել է 2000-ականների ընթացքում Անկարայի վարած արտաքին քաղաքականության արդյունքում: Դրան ավելացած ներքաղաքական լուրջ բարդությունները՝ հեղաշրջման փորձ, դրան հաջորդած բռնությունների մեծ ալիք, ապա՝ հակաժողովրդավարական սահմանադրական փոփոխություններ, իրավիճակը դարձրել են չափազանց բարդ: Կարծես թե կարող է կրկնվել մեկ դար առաջ տեղի ունեցածը, երբ նոր աշխարհակարգի ձևավորման փուլում բոլորից մերժված Ռուսաստանը և Թուրքիան կարողացան միմյանց ապավինելով դուրս գալ բարդ իրավիճակից: Իհարկե, մեկ դար միմյանց բաժանող իրավիճակները նաև տարբերություններ ունեն. թեև Եվրոպան բարդ խնդիրներ պետք է լուծի՝ փախստականների և ահաբեկչությունների մեծ ալիք, Եվրամիության կտրուկ ընդլայնումով և Բրեքսիտով պայմանավորված դժվարություններ, որոշ դեպքերում սեփական շահերի անտեսում՝ հանուն Միացյալ Նահանգների հետ համերաշխության դրսևորման քայլերի, և այլն, սակայն ջախջախված չէ, ինչպես առաջին համաշխարհային պատերազմից հետո, և կարող է ազդեցություն ունենալ իրադարձությունների զարգացման վրա: Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում այլևս անցած դարասկզբի անմխիթար վիճակը չէ, որի պայմաններում ռուս-թուրքական «առևտուրը» ունեցել է անսահմանափակ հնարավորություններ: Սակայն ակնհայտ է, որ Եվրասիական կենտրոնի երկու ամենաանհանգիստ տարածաշրջաններում առկա բարդ խնդիրների հանգուցալուծումը պայմանավորված է լինելու նոր աշխարհակարգի ձևավորմամբ և աշխարհաքաղաքական հավասարակշռության հաստատմամբ:

Russian-Turkish Rivalry or Cooperation?

TIGRAN TOROSYAN
Brusov State University of Languages and Social Sciences

GRIGOR ARSHAKYAN
Brusov State University of Languages and Social Sciences

The article is focused on the Russian-Turkish relations marked by drastic ups and downs particularly after the Five-Day War between Russia and Georgia. The impressive growth of their economic component and the prospects for further expansion are not a guarantee for predictability of bilateral relations in the foreseeable future. Over the past decade, the turbulent nature of these relations is mostly driven by the rapid developments in the Eurasian Heartland conditioned by new world order formation. Meanwhile, it is also largely due to the clash of interests between Russia and Turkey in the South Caucasus and the Middle East. The relations of the two countries are also affected by the fact that their interests coincide in some projects regarding the transportation of energy resources to Europe. The complex and multifactor nature of their relationship often leads to a drastic transformation of cooperation into rivalry and sometimes even to harsh confrontation, and vice versa.